ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2017 թվականի դեկտեմբերի 6-ին

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 18. Արտոնագրի գործողության կասեցումը

1. Արտոնագրի գործողությունը կասեցվում է Խորհրդի որոշմամբ՝ արտոնագրման հանձնաժողովի եզրակացության հիման վրա, եթե ճարտարապետը (ճարտարագետ-կոնստրուկտորը)՝

1) չի մուծել Պալատի կանոնադրությամբ սահմանված տարեկան անդամավճարը.

2) օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անհայտ բացակայող.

3) դիմել է կասեցման խնդրանքով.

4) շարունակական հինգ տարիների ընթացքում չի զբաղվել մասնագիտական գործունեությամբ և չի մասնակցել վերապատրաստման սահմանված ժամաքանակով դասընթացներին:

2. Պալատի նախագահը Խորհրդի որոշումը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է լիազորված մարմնի ղեկավարին, որը կարող է բողոքարկվել մեկամսյա ժամկետում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքերով արտոնագիրը կասեցված անդամը Պալատի մարմինների ընտրություններին չի մասնակցում:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը վերանալուց հետո՝ 45 օրվա ընթացքում, ճարտարապետի (ճարտարագետ-կոնստրուկտորի) արտոնագրի գործողությունը վերականգնվում է իր դիմումի հիման վրա:

5. Արտոնագրի գործողությունը վերականգնելը մերժվում է միայն կեղծ տվյալներ ներկայացնելու պատճառով: Արտոնագրի գործողության վերականգնելը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

6. ~~Հանրային ծառայության պաշտոն~~ **Հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն** զբաղեցնող ճարտարապետի կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտում՝ պաշտոնատար անձի այլ գործունեությամբ զբաղվելու սահմանափակումների մասով, հայտնաբերվելու դեպքում Խորհուրդը երկու ամիս ժամկետով կասեցնում է ճարտարապետի արտոնագրի գործողությունը և հաղորդում ներկայացնում համապատասխան մարմին՝ խախտման փաստի վերաբերյալ ծառայողական քննություն իրականացնելու խնդրանքով: Ծառայողական քննության արդյունքների հիման վրա կասեցման մասին որոշումը չեղյալ է համարվում կամ հաստատվում է նոր ժամկետով՝ մինչև խախտման հիմքերի վերանալը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: